Զգուշության փող

Trumpet's Sound

48-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2017

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիսուսը՝ մեր միջնորդը ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Երբ Աստված չի համագործակցում ..... Ռեքս Տիրլավ

Հաց և ձուկ 20,000 հոգու համար ..... Դոկտ. Զեսլո Բասսարա

Տերը՝ մեր պաշտպանը ..... Դոկտ. Եղիա Պապիկյան

Եբրայեցիներին ուղղված նամակը (բաժին 2, մաս 2) ..... QMBC պանորամա

Ինչո՞ւ ծոմ պահել ..... Քաղված

Սխալ դատողություն ..... Քաղված

Հոգևոր տնտեսագիտության դասեր (3) ..... Մանկանց ավետ. ընկ.

Մարիամը այցելում է Եղիսաբեթին ..... Դոն Սթորմըր

Ճշմարիտ ապաշխարություն ..... Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Բարի լուր ..... Խ. Գասպարյան

Հիսուսը՝ մեր միջնորդը

«Քանզի մեկ Աստված կա և մեկ միջնորդ՝ Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս Մարդը» (Ա Տիմ. 2.5)

Մեր կյանքում հաճախ ունենում ենք միջնորդների կարիք: Մարդիկ մեղադրում են իրենց ընկերներին հանդիպած դժվար խնդրի լուծմանը չմիջնորդելու համար: Երբեմն ունենում ենք երաշխավորողների կարիք, երբ ուզում ենք բանկից ապառիկ գումար վերցնել կամ վիրահատվել, կամ դատական բարդ գործընթացի մեջ ենք, կամ նոր գործ ենք փնտրում:

Իսկ երբ մեղք ենք գործում, և այն վնաս է հասցնում մեզ, արդյո՞ք միջնորդի կարիք ենք ունենում: Երբ զգում ենք, որ մեր և Աստծո միջև եղած կապը ընդհատվել է, երբ Նրա սերը կրկին գտնելու կարիք ունենք, երբ հոգևորապես կազդուրվելու, մխիթարվելու և ներքին խաղաղություն ունենալու կարիք ունենք, կամ երբ բոլոր մարդիկ լքեն մեզ և ոչ ոքի ու ոչ մի բանի վրա հույս չկարողանանք դնել, կամ երբ մահվան անկողնու վրա լինենք և անստույգ ապագայի վախից տառապենք, արդյոք միջնորդի կարիք կունենա՞նք, թե՞ ոչ:

Սիրելի՛ բարեկամներ, ճիշտ սրա համար Հիսուսն աշխարհ եկավ: Ահա թե ինչու Նա Իր կյանքը տվեց մարդկության համար: Նա մահացավ, որպեսզի մենք ապրենք:

Աստված սուրբ է. ոչ ոք չի կարող տեսնել Աստծուն և ապրել: Աստծո փրկության ծրագիրն այն էր, որ Իր Որդուն ուղարկեր, որ ամեն Նրան հավատացողը հավիտենական կյանք ունենար:

Հիսուսը դարձավ մեր միջնորդը: Մենք փրկվում ենք հավատքով, Հիսուս Քրիստոսի միջոցով: Մեր և Աստծո միջև եղած անջրպետը վերացավ Հիսուս Քրիստոսի շնորհիվ: Նա Հայր Աստծո մոտ բարեխոսություն է անում մեզնից յուրաքանչյուրի համար:

Ահա թե Հիսուսն ինչ աղոթեց քեզ համար.

«Սակայն ոչ թե միայն սրանց համար եմ աղոթում, այլ նաև նրանց համար, ովքեր պիտի հավատան Ինձ՝ սրանց խոսքի միջոցով, որ-

պեսզի ամենքը մեկ լինեն, ինչպես Դու, Հա՛յր, Իմ մեջ ես և Ես Քո մեջ, որ նրանք նույնպես մեկ լինեն Մեր մեջ, որ աշխարհը հավատա, թե Դու՛ Ինձ ուղարկեցիր: Եվ այն փառքը, որ Դու Ինձ տվիր, Ես նրանց տվեցի, որ մեկ լինեն, ինչպես Մենք մեկ ենք. Ես նրանց մեջ, և Դու՝ Իմ մեջ, որ նրանք կատարյալ լինեն միության մեջ. և, որպեսզի աշխարհն իմանա, որ Դու՛ ուղարկեցիր Ինձ և սիրեցիր նրանց, ինչպես Ինձ սիրեցիր: Հա՛յր, Ես կամենում եմ, որ նրանք էլ, ում Դու ինձ տվեցիր, Ինձ հետ լինեն, ուր որ Ես եմ, որպեսզի տեսնեն Իմ փառքը, որ Ինձ տվեցիր. քանի որ Դու Ինձ աշխարհի հիմնումից առաջ սիրեցիր: Ո՛վ արդար Հայր, աշխարհը չճանաչեց Քեզ, բայց Ես ճանաչեցի Քեզ, և սրանք ճանաչեցին, որ Դու ուղարկեցիր Ինձ: Եվ Ես Քո անունը հայտնեցի նրանց, և պիտի հայտնեմ այն, որպեսզի այն սերը, որով Դու Ինձ սիրեցիր, նրանց մեջ լինի, և Ես՝ նրանց մեջ» (Հովհ. 17:20-26):

Արդյոք զարմացա՞ր: Նա մեզ սիրող և ողորմող Աստվածն է, մեզ սիրող Հիսուս Փրկիչն է, մեր և Աստծո միջև կանգնած բարեխոսն է, ով աղոթում է մեր միաբանության և սիրո համար. միաբանություն Իր և Հայր Աստծո հետ ոչ միայն երկրի վրա, այլև Երկնքում:

Թող Աստծո սերը սիրտդ ուրախությամբ ու ցնծությամբ լցնի այսօր:

Հ. Գ.

«Աստվածաշունչը մեզ տրված է ոչ թե մեր գիտելիքը չատացնելու, այլ մեր կյանքերը փոխելու համար»: Տ. Լ. Մուդի

«Ո՛վ Աստված, փրկի՛ր մեզ հանգիստ կյանք վարելու փափագից, մինչ մեղավորները կորչում են դժոխքում»: Զ. Սփերջեն

«Մեր խնդիրը պատգամը ընդունելի դարձնելը չէ, այլ հասանելի»: Վենս Հավնը

«Մենք չատ զբաղված ենք աղոթելու համար, հետեւաբար չատ զբաղված ենք զորություն ստանալու համար: Մենք չափազանց ներգրավված ենք գործունեությունների մեջ, սակայն քիչ բանի ենք հասնում, չատ ծառայություններ ունենք, սակայն քիչ դարձի եկողներ, չատ միջոցներ, բայց քիչ արդյունքներ»: Ռ. Ա. Թորրի

Երբ Աստված չի համագործակցում

Հայտնագործություն կա, որ մեզանից յուրաքանչյուրն անխուսափելիորեն ունենում է իր քրիստոնեական կյանքի ընթացքում: Դա այն բանի բացահայտումն է, թե Աստված որքա՞ն անհամագործակցող է թվում, երբ խոսքը վերաբերում է մեր անձնական կյանքի համար մեր կազմած ծրագրերն իրականացնելուն: Մեզանից շատերը՝ որպես սկսնակ հավատացյալներ, Աստծո հետ հաղորդակցվելու բուռն և խանդավառ ձգտում ունեցանք, երբ մեր ոտքերը դրեցինք քրիստոնեական ճանապարհին: Մենք սկսեցինք մտածել. «Հիմա, երբ Աստված կյանքիս մեջ է, ամեն ինչ ճիշտ իմ ուզածիս պես է ընթանալու: Որքա՞ն հրաշալի է Աստծուն ճանաչելը»: Այս միտքը, իհարկե, իրականությունից շատ հեռու է:

Ոմանք հիասթափվում են Աստծուց իրենց պատահած ինչ-որ դըժբախտ ողբերգության պատճառով, որի մեջ նկատում են, թե Աստված կարծես լրիվ անտարբեր է: Ոմանք էլ հիասթափվում են Աստծուց չպատասխանված աղոթքների և իրենց կյանքում պատահած հաճախակի հուսախաբությունների պատճառով: Ի վերջո, նրանք գալիս են այն եզրահանգմանը, որ կարևոր խնդիրների շուրջ չի կարելի վստահել Աստծուն, կամ հոգևոր գաղտնի, իրենց անհայտ բանաձև կա, որը եթե իմանային, կկարողանային ինչ-որ կերպով ներգրավել Աստծուն իրենց խնդրի մեջ և ունենալ Նրա համագործակցությունն ու ամբողջական աջակցությունը:

Գիրքը գրքի հետևից, խոսնակը խոսնակի հետևից բազմաթիվ առաջարկներ են տալիս մեզ, բայց գործնականում մեր կյանքում կարծես թե ոչ մի բան չի փոխվում: Ոմանք շփոթության մեջ վերջիվերջո սկսում են հարցնել. «Ի՞նչ պետք է անեմ, որ կյանքիս մեջ ունենամ Աստծո համագործակցությունը: Վերջիվերջո այն, ինչ ուզում եմ կյանքիս մեջ, բարի և իրավացի է»:

Շատ վտանգավոր աստվածաբանություն է տարածված, որը Աստծուն ներկայացնում է որպես Ալադինի ունեցած կախարդական լապտերի ջինի, փափագներ կատարող մի անձնավորության: Ալադինը

պարզապես պետք է ձեռքերով շփեր լապտերը և միջից դուրս կգար ջինը՝ կազմ պատրաստ կատարելու յուրաքանչյուր ցանկություն: Որոշ մարդկանց համար քրիստոնեական կյանքի իմաստն այն է, որ իրենք վերջապես բացահայտեն ու տիրապետեն Աստծո՝ իրենց ցանկությունները կատարելու ճիշտ բանաձևին: Այս մոտեցման մեջ Աստված ընկալվում է որպես շահ բերող միջոց: Որքա՜ն հաճախ են Աստծուց հիասթափված մարդիկ աղաղակում՝ ասելով. «Եթե Աստված այս կամ այն խնդրի մեջ չի կարող օգնել ինձ, ապա ինչի՞ս է պետք»: Այս գաղափարախոսությունն Աստծուն տեսնում է որպես միջոցի՝ թվացյալ կարևոր կարիքները բավարարելու համար: Նրանք մոռանում են, որ «մեր Աստվածը երկինքներում է. Նա արեց ինչ որ ուզում էր» (Սաղ. 115.3):

Աստված մեր բոլոր որոնումների և փափագների վերջնական և միակ բավարար պատասխանն է, վերջնական նպատակը: Եթե Աստված է վերջնական նպատակը, ապա Նա չի կարող օգտագործվել որպես միջոց՝ հասնելու այլ նպատակի, որը Իրենից այն կողմ է գտնվում: Աստծուն ճանաչելուց այն կողմ վերջնակետ գոյություն չունի: Ցանկացած դրսևորում, որ Աստծուն հավասարեցնում է օգտակար գործակցի, որի շահարկմամբ անձը հավատում է, թե կկարողանա երջանկանալ և լիարժեքության զգացում ունենալ, դատապարտված է ձախորդության: Աստված մեզ այնքան շատ է սիրում, որ այսպիսի մանկական խաղի մեջ չի մտնում մեզ հետ: Նա լռությամբ սպասում է մեզ, որ գիտակցենք, թե հոգևոր հասունությունը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ հրաժարվում ենք Իրեն մեր նպատակներին հասնելու համար շահարկելուց և հանձնվում ենք Իր անսահման և խորհրդավոր սիրուն: Այս դասը յուրացնելու առիթները մեր կյանքի մեջ հաճախ գալիս են ամենամռայլ, ամենացավալի և հիասթափեցնող պահերին:

Այդ պահերից յուրաքանչյուրում որոշում ենք կայացնում. արդյոք մերժելո՞ւ ենք Աստծո համագործակցությունը, թե՞ անձնատուր ենք լինելու Նրա խորհրդավոր սիրուն, որը ենթակա չէ շահագործման: Սրանք են ճշմարիտ աճի և հասունության պահերը:

Մեր փափագած բաներից հրաժարվելը, որոնց մասին մեծ պատ-

կերացում ունենք, հավասար է մահանալուն, սակայն սա իսկապես ապրելու առաջին քայլն է: Երբ սկսում ենք հայտնաբերել, որ Աստված մեր սեփական ծրագրերն առաջ տանելու համար համաձայն չէ համագործակցման, այդ ժամանակ սկսում ենք Աստծուն տեսնել Իր ամբողջ գեղեցկությամբ: Քրիստոսը շատ գեղեցիկ ամփոփեց՝ ասելով. «Բայց դուք նախ խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ»:

Ռեքս Տիրլավ

Մերձավոր Արևելքում ճանապարհորդող զբոսաշրջիկը մի անգամ կիսվեց իր դիտարկումներով: Նա պատմեց այսպիսի պատմություն. «Երեք հոտեր, որոնց արածեցնում էին տարբեր հովիվներ, ջուր խմելու գնալիս խառնվեցին: Այդ ժամանակ ես մտածեցի, որ հովիվների համար շատ դժվար կլինի իրենց ոչխարներին գտնելն ու դեպի իրենց հոտը առաջնորդելը: Արդյոք կարո՞ղ են նրանք տարբերել իրենց ոչխարներին: Երբ ոչխարները խմեցին, հովիվներից մեկը կանչեց իր ոչխարներին, և նրանք անմիջապես հավաքվեցին այդ հովվի մոտ, հետո երկրորդ հովիվը կանչեց իր ոչխարներին, և դրանք նույնպես հավաքվեցին նրա մոտ: Այդ ժամանակ ես խնդրեցի երրորդ հովվին, որպեսզի նա ինձ թույլ տա կանչել իր ոչխարներին: Ես հարցրի հովվին.

- Արդյոք քո հոտի ոչխարները արձագանքում են միայն քո՞ կանչին:

- Բացառություն կարող է լինել միայն հիվանդ ոչխարը. առողջները չեն գնա ուրիշների ետևից,- ասաց նա:

Օտարին հետևելը վտանգավոր է: Եկեք ետ կանգնենք նրանցից, ովքեր խոստանում են ինչ-որ հրապուրանք, բայց իրականում խաբում են: Ո՛չ փիլիսոփայությունը, ո՛չ գիտությունը ընդունակ չեն պարգևելու իսկական ուրախություն: Միայն Հիսուս Քրիստոսն է ընդունակ դրան: Եթե հավատացյալը հետևում է Հիսուս Քրիստոսին, ապա դա վկայում է նրա հոգևոր առողջության մասին: Եթե մենք նկատում ենք, որ հետևում ենք ուրիշ բաների, ապա պետք է դառնանք Տիրոջը և հետևենք Նրան:

Հաց և ձուկ 20,000 հոգու համար

Հովհ. 6.1-14

Հովհաննեսը Հիսուս Քրիստոսին ներկայացնում էր որպես Աստծո, ամենակարող Աստծո: Աշակերտները մոռացել էին, որ իրենց հետ ունեին Տեր Հիսուսին, ով ամենակարող Աստված է:

Փորձենք դիտել այս հրաշքը երեխայի աչքերով: Ի՞նչ էր մտածում տղան այդ առավոտյան տնից դուրս գալիս: Մայրը հոգ էր տարել նրա մասին, նրան տվել էր ճաշի համար անհրաժեշտ ուտելիք:

Փիլիպպոս

Փիլիպպոսը պատրաստ չէր տալու 200 դահեկան. «Մենք քիչ փող ունենք. 200 դահեկան 20,000 հոգու համար»: 2,000 դահեկան էր անհրաժեշտ: Նրանք ընդամենը 10%-ն ունեին: Փիլիպպոսի համար դա չափազանց քիչ էր, որպեսզի տար Տիրոջը՝ ժողովրդին կերակուր գնելու համար: Փիլիպպոսն արդեն տեսել էր առաջին հրաշքը՝ ջուրը գինի դարձնելը: Միաժամանակ նա երկու բժշկություն էր տեսել՝ ազնվականի որդին՝ Կափառնայումում (Հովհ. 4:46-54) և անդամալույծը՝ Բեթհեզդայում (Հովհ. 5:1-8):

Անդրեաս

Անդրեասն էր նկատողը, որ տղան տալու բան ուներ: Անդրեասը մոտեցավ ճիշտ երեխային և նրա ամբողջ տվածը բերեց Տեր Հիսուսին:

Անանուն տղան

Նա գրեթե ոչինչ չուներ: Տղայի ճաշը երևի մեկ դահեկանի 10%-ից էլ քիչ էր: Նշանակում էր՝ աշակերտները տղայից 2,000 անգամ ավելին ունեին: Տղան (նա հավանաբար դեռ չէր տեսել Հիսուսի հրաշքները) տվեց պահանջվածի միայն 0.0005%-ը: Քիչը շատ է, եթե Աստված դրանում է: Այս տղայի համբավը տարածվեց աշխարհում, քանի որ նա պատրաստ էր տալու քիչը: Նա սկսեց իր ունեցածով: Աստված սկսում է գործել մեր գտնված կետից ու մեր ունեցածից:

Աստծո ապահովումը

Աստված այս անհայտ զույգին որդի պարգևեց, ով դառնալու էր Աստծո ծրագրի մի մասնիկը: Աստված էր ամեն ինչ դասավորում: Նա տղայի հոր համար աշխատելու հնարավորություններ ստեղծեց, ըստ ամենայնի՝ ձկնորսություն: Աստված տղայի մորը նրբազգաց էր դարձրել որդու կարիքների հանդեպ: Նա որդու համար ճաշ էր պատրաստել. հաց էր թխել ու ձուկ ծխեցրել, որը երևի հայրն էր բռնել: Տղան ճիշտ ժամին ճիշտ տեղում էր: Արդեն ուշ էր, սակայն նա դեռ չէր ճաշել: Նա տվեց՝ ինչ ուներ: Նա շատ չտվեց, այլ տվեց ամեն ինչ: Նա ամեն ինչ տվեց Տեր Հիսուսին:

Քիչը՝ Տեր Հիսուսի ձեռքերում

Եթե աշակերտները փորձեին ժողովրդին կերակրել այդ տղայի զոհաբերածով առանց Հիսուսի զորության, միայն մեկ մարդ կկշտանար, մնացած բոլորը քաղցած կմնային:

Տեր Հիսուսը բազմացրեց

Տեր Հիսուսը բազմապատկեց տղայի տվածը: Նա չբազմապատկեց այն, ինչ աշակերտները հոժար չէին տալու: Հիսուսը գործադրեց բազմապատկման սկզբունքը: Տեր Հիսուսը՝ որպես Աստված, կարող է հաց սարքել քարից, նույնիսկ՝ ոչնչից: Նա ամեն ինչի Ստեղծիչն է, սակայն գերադասեց քչից շատը սարքել:

Պարզ իրականությունը

1. Մեկ փոքրիկ տղայի ճաշը շատերին կշտացրեց:
2. Մեկ փոքրիկ տղայի ճաշը փոփոխություն մտցրեց:
3. Մեկ փոքրիկ տղայի ճաշը բացահայտեց Աստծո զորությունը:
4. Մեկ փոքրիկ տղայի ճաշը կյանքեր փոխեց:
5. Մեկ փոքրիկ տղայի ճաշն ամրացրեց մարդկանց հավատքը:

Դոկտ. Չեսլով Բասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

Տերը՝ մեր պաշտպանը

Սաղմոս 121

Մեր երկրավոր ճամփորդությունը միշտ չի անցնում ծաղկաստաններով, հաջողություններով. երբեմն հանդիպում են անդաստաններ, փոթորիկներ, ձախողություններ: Քանի որ երկրի վրա այսպիսի կյանք ենք ապրում, ի՞նչ պետք է անենք, ո՞րն է այս մռայլ, փշոտ կյանքի բալասանը, դեղը: Ինչպիսի՞ կյանք պետք է ապրենք: Մեր ուղեցույցը՝ Աստծո Խոսքը, մեզ տալիս է Դավթի օրինակը: Դավիթը հասել էր ախոյանության և հաջողության գագաթնակետին՝ տապալելով Գողիաթին, նվաճելով ազգերը և բարձրանալով թագավորության աստիճանի: Սակայն Դավիթը նույնպես խմեց կյանքի դառը գավաթից: Ինչպե՞ս: Նա տարիներ շարունակ հալածվեց իր կնոջ հոր կողմից: Սավուղն էլ անդադար հալածեց նրան՝ սպանելու նպատակով: Նա նույնիսկ դավաճանվեց իր զորապետի կողմից, երկու տղաներն իր դեմ ելան և դժբախտաբար նա ընկավ մեղքի մեջ: Ինչպե՞ս սուրբ և զորավոր մի անձնավորություն ընկավ երկու մեծ մեղքերի մեջ՝ բարոյական և փառասիրական: Դավիթն ուզեց իր հպատակ ժողովրդին հաշվել՝ իմանալու նրանց քանակը, և Աստված հարվածեց նրա ժողովրդին՝ սպանելով հազարավորների:

Ի՞նչ դաս ունենք սովորելու այսօր: Դավիթը գտել էր իր ցավերի դեղը: Նա 121-րդ սաղմոսը գրեց: Այս վիճակներում աչքերս դեպի լեռներն եմ բարձրացնելու, որտեղից իմ օգնությունն է գալու: Ինչպիսին էլ լինեն մեր երկրային վիճակները, մեր ցավերը՝ հոգեկան, մտային, նյութական, միակ բալասանը, կողմնացույցը մեր աչքերը դեպի լեռները բարձրացնելն է, որտեղից մեր օգնությունն է գալու:

Երբ Հայաստանում էի, մի քանի ազգային առաջնորդներ ուզեցին, որ հեռուստացույցով իրենց հետ հարցազրույց ունենամ: Հարցը այս էր. «Տեսնում եք մեր վիճակը. ի՞նչ է լուծումը, ի՞նչ եք կարծում»: Պատասխանս հետևյալն էր. «Ես քաղաքագետ չեմ, բայց որպես Աստծո զավակներ՝ եթե երկու պայման գործադրեք, կարծում եմ՝ Հայաստանը կուղղվի: Նախ՝ առաջնորդները թող ձեռք ձեռքի բռնեն, երկ-

որդ՝ երբ ձեռք ձեռքի բռնեն, թող վեր նայեն: Այն ժամանակ Հայաստանը կուղղվի: Հայաստանի օգնությունը, լուծումը միայն վերևից է, եթե պայմանները պահեք»: Թող իրենց աչքերը բարձրացնեն դեպի Արարատ լեռը: Այս օրերին շրջապատված ենք մեղսալի միջավայրով, ինչպես Նոյի ժամանակ: Անբարոյականություն և ամեն տեսակի մեղք կա: Աստված արդար Նոյին և նրա ընտանիքին ազատեց ջրհեղեղից և տապանի մեջ փրկեց նրանց Արարատ լեռան վրա: Հայ ժողովուրդը ուզում է ազատվել և մաքուր մնալ: Մեր աչքերը բարձրացնենք դեպի Արարատ լեռը, և ազատության Աստվածը մեզ օգնության կհասնի:

Երբ Աքաաբ թագավորի օրերին Իսրայել ժողովուրդը շվարել էր, Եղիա մարգարեն հավաքեց 950 հեթանոս մարգարեներ Կարմեղոս լեռան գագաթին և ասաց. «Մինչև ե՞րբ եք երկու մտքի վրա կաղալու. եթե Եհովան է Աստված, Եհովային պաշտեք, եթե Բահաղն է Աստված, Բահաղին պաշտեք»: Եղիան աղոթեց Աստծուն, և Աստված կրակ իջեցրեց՝ փաստելով, որ իսկական ճշմարիտ Աստվածը Եհովա Աստվածն է: Ուրեմն երբ երկմտում ենք մեր երկրային կյանքում, երբ շփոթվում ենք, ո՞րն է ելքը: Հավատքով նայե՛նք Կարմեղոս լեռանը, ուր Եհովան հայտնվեց, և որտեղից գալու է մեր օգնությունը հարյուր տոկոսով:

Պատահում է, որ երբեմն մեր մեջ էլ հակաճառություն է սկսվում: Եկե՛ք այդ պարագայում մեր աչքերը բարձրացնենք դեպի Սինա լեռը, ուր Աստված հայտնվեց Մովսեսին և նրան տվեց Տասնաբանյան: Աստված մեզ քրիստոնեական սկզբունքներ է տվել Սուրբ Գրքում, որպեսզի այս կյանքը Իր համար ապրենք և ոչ մեր անձերի համար:

Եվս մեկ լեռ հիշենք, հատկապես հոգևորներիս համար: Մենք վկայում ենք, որ Աստծո շնորհով ծնվել ենք Սուրբ Հոգուց ու հոգևոր կյանք ենք ապրում, սակայն իրողություն է, որ Աստծուն պատկանելուց հետո նույնպես երբեմն ունենում ենք հոգևոր սրտխառնոց, անհանգստություն, երբեմն էլ վրդովվում ենք: Ի՞նչ պետք է անել: Մեր աչքերը բարձրացնե՛նք դեպի Մորիա լեռը: Որպես Աստծո զավակներ՝ երբեմն լիովին նվիրված չենք լինում Իրեն, շարունակում ենք պահել մի շարք սովորություններ, չենք գտնում լիարժեք խաղաղություն: Այսպիսին էր

Աբրահամը, մինչև որ Աստված նրան սովորեցրեց լիովին հանձնվել: Նրա ծերության ժամանակ հրաշքով զավակ շնորհեց և հետո խընդրեց, որ զավակին Մորիա լեռան վրա զոհի Իրեն: Սա նշանակում էր, որ Աբրահամն ամեն ունեցածը պետք է հանձներ Աստծուն: Աբրահամը փաստեց, և Տերը ետ շնորհեց իր զավակին: Հոգևոր կյանքի քաղցրությունը, հանգստությունը, խաղաղությունը ամեն բան Տիրոջ վրա թողնելն է, ամեն բան Նրան հանձնելն է, «Քո կամքը օրհնյալ լինի» ասելն է, բոլոր վիճակներում «Տերը սրա մասին տեղյակ է, Աստծո կամքը օրհնյալ լինի» ասելն է: Այն ժամանակ գլուխդ բարձի վրա կդնես և կքնես: Մեր բոլոր հարցերը հանձնե՛նք Աստծուն և մեր աչքերը բարձրացնե՛նք դեպի Մորիա լեռը, որտեղից մեր օգնությունն է գալու:

Մենք ապրում ենք 21-րդ դարում և սպասում ենք Քրիստոսի վերադարձին: Ինչպես Ձիթենյաց լեռան վրայից համբարձվեց, այդպես էլ վերադառնալու է: Բարձրացնե՛նք մեր աչքերը դեպի Ձիթենյաց լեռը: Աշխարհի վիճակը վատթարանում է. բոլոր նշանները ցույց են տալիս, որ Հիսուսը վերադառնալու է: Երբ մեր աչքերը բարձրացնենք դեպի Արարատ լեռը՝ Աստծո ազատությունը, դեպի Կարմեղոս լեռը՝ իրական ճշմարիտ Աստծուն, դեպի Սինա լեռը՝ ուղղություն ցույց տվող Աստծուն, դեպի Մորիա լեռը՝ Աբրահամի Աստծուն, մեր աչքերը բարձրացնե՛նք նաև դեպի Ձիթենյաց լեռը՝ մեր Տիրոջն ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի մոտալուտ գալուն:

Դոկտ. Եղիա Պապիկյան

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

«Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն Քեզ՝ միակ ճշմարիտ Աստծուն եւ Հիսուս Քրիստոսին, ում Դու ուղարկեցիր» (Հովհ. 17.3):

Եբրայեցիներին ուղղված նամակ
(բաժին 2, մաս 2)

Օրենքը պահանջում էր, որ ամեն օր և ամեն տարի կենդանական զոհաբերություններ կատարվեին, որոնք ընդամենը հիշեցում էին, որ «հնարավոր չէ, որ նոխազների և ցուլերի արյունը կարողանա մեղքերը վերացնել» (Եբր. 10.3-4): Սաղմոս 40.6-8-ից արված մեջբերումը ցույց է տալիս, որ Աստված իրոք չի ցանկանում կամ չի պահանջում կենդանական զոհաբերություններ և ընծաներ: Դրա համար կարդում ենք. «Բայց երբ ժամանակը լրացավ, Աստված ուղարկեց Իր Որդուն, որ կնոջից ծնվեց և Օրենքի տակ մտավ, որպեսզի Օրենքի տակ եղողներին փրկագնի, որ մենք որդեգրությունն ընդունենք» (Գաղ. 4.4-5): Մենք կարող ենք որոշակի պատկերացում ունենալ, թե ինչպես էր դա ուրախացնում Աստծո սիրտը, երբ վերհիշենք այն խոսքերը, որոնք Երկնքից տարբեր առիթներով երկու անգամ հնչեցին. «Սա է իմ սիրելի Որդին, ում հավանեցի» (Մատթ. 3.17, 17.5):

Մեկ անգամ ևս հիշեցվում է, որ ամենօրյա զոհաբերությունները չեն կարող մեղքերը հեռացնել: Այնուհետև տեսնում ենք հսկայական մի հակադրություն. «Մենք էլ սրբվեցինք՝ Հիսուս Քրիստոսի մարմնին մեկընդմիշտ պատարագվելով:…Բայց այս Մարդը, մեղքերի համար մեկ անգամ պատարագ մատուցելով, հավիտենապես նստեց Աստծո աջ կողմում, այնուհետև սպասում է, մինչև որ Իր թշնամիներն Իր ոտքերի տակ որպես պատվանդան դրվեն: Որովհետև մեկ պատարագով հավիտյան կատարյալ դարձրեց նրանց, որ սրբվեցին» (Եբր. 10.10, 12-14):

Երկու Ուխտերին վերաբերող մանրամասն բացատրությունից հետո եբրայեցի քրիստոնյաների մտքում չպետք է որևէ կասկած մնար, որ իրենց քահանայապետը իրականում ազդեցիկ և ողջ քահանայապետ է, ով Իր արյամբ մտել է սրբարանը (Երկնային սրբարանը, ճըշմարիտ խորանը)՝ մեզ համար հավիտենական փրկություն ապահովելով (Եբր. 9.12):

3. Հարատևելու առաջին կոչը և 5-րդ զգուշացումը (10.19-39)

Այս բաժինը կարելի է բաժանել երեք մասի: Առաջին՝ հավատացյալները հորդորվում են Աստծուն մոտենալու (մի բան, որ նրանք չէին կարող անել Հին Ուխտի ժամանակաշրջանում), անխախտ պահելու քրիստոնեական հույսը և իրար հոգ տանելու՝ սիրո և բարեգործության մղելով (Եբր. 10.19- 25): Երկրորդ՝ նրանք խստորեն զգուշացվում են, որ եթե Քրիստոսից շրջվեն, ապա այլևս մեղքի համար զոհ չի մընում (Հին Ուխտը հին է դարձել, Եբր. 8.13): Բացի այդ, նրանք Աստծո կողմից խստորեն կպատժվեին, քանի որ այդպես անելով՝ ոտնահարած կլինեին Աստծո Որդուն, Ուխտի արյունը և Սուրբ Հոգուն անարգած կլինեին (Եբր. 10.26-31): Երրորդ՝ հավատացյալները խրախուսվում են քննելու իրենց կյանքն ու հավատքի փորձառությունը և Քրիստոսից չշեղվելու, որպեսզի արժանանան Երկնավոր վարձատրության (Եբր. 10.32-39):

1. Հորդորանք: Չնայած դրան, որ Նոր Ուխտը հիմնականում Իսրայելի համար է (Եբր. 8.8), քրիստոնյաները այժմ կարող են վայելել այդ Ուխտի որոշ օրհնությունները: Որպես քահանաներ՝ նրանք կարող են Հիսուսի արյունով մտնել սրբության սրբոցը: Նախկինում քահանաներն ընտրվում էին կոնկրետ ցեղից, սակայն հիմա բոլոր քրիստոնյաներն էլ քահանաներ են համարվում և կարող են մուտք գործել Աստծո ներկայության մեջ «(Քրիստոսը) և մեզ թագավորներ ու քահանաներ դարձրեց Աստծո և Իր Հոր համար» (Հայտն. 1.6): Իհարկե, մենք չենք կարող դա անել առանց մեր մեծ քահանայապետի օգնության, ով մտավ «բուն երկինքը, որպեսզի հիմա Աստծո առջև ներկայանա մեզ համար» (Եբր. 9.24): Քառակի հորդորանքը հետևյալն է.

(Ա) Եկե՛ք մոտենանք Աստծուն ճշմարիտ սրտով, հավատի կատարյալ վստահությամբ:

(Բ) Եկե՛ք անխախտ պահենք մեր հույսի դավանանքը:

(Գ) Եկե՛ք միմյանց մասին հոգ տանենք՝ սիրո և բարեգործության մղելով:

(Դ) Եկե՛ք մեկտեղ հավաքվելը չթողնենք..., եկե՛ք միմյանց քաջալերենք:

2. Նախազգուշացում: Քրիստոսի քահանայապետության, Նոր Ուխտի և Քրիստոսի արյան՝ մեղքերը մեկընդմիշտ քավելու ուսուցումները լսելուց հետո այսպիսի մեծ փրկությունից հրաժարվելը հրավիրում է սարսափելի պատժի, ավելի սարսափելի, քան Եբր. 6.4-8-ի նախազգուշացումն է: Այստեղ հեղինակը մեղադրում է նրանց, ովքեր վերադարձել են մեղավոր կենսակերպին, ոտնատակ են արել Աստծո Որդուն, անսուրբ են համարել Ուխտի արյունը և անարգել են շնորհքի Հոգուն: Նա ավելացնում է՝ ասելով. «Տերը պիտի դատի Իր ժողովուրդը… Ահավոր բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը» (Եբր. 10.30-31, համեմատե՛լ Բ Օր. 32.35-36-ի հետ):

Բայց մենք պետք է կրկնենք այն, ինչ ավելի վաղ հայտարարել էինք, որ ճշմարիտ քրիստոնյաները չեն կարող կորցնել իրենց փրկությունը, սակայն կարող են կորցնել իրենց վարձատրությունը Քրիստոսի ատյանի ժամանակ: Նաև Աստված կարող է պատժել նրանց ֆիզիկական մահով:

3. Խրախուսում: Հեղինակը եբրայեցի քրիստոնյաներին հիշեցնում է անցյալի հալածանքների մեջ իրենց դրսևորած հավատարմությունը. նրանք նախատվեցին, նեղությունների հանդիպեցին, ստացվածքի հափշտակությունը ուրախությամբ ընդունեցին, քանի որ գիտեին, որ ավելի լավ և մնայուն հարստություն ունեն Երկնքում: Ուստի քաջալերվում էին, որ չկորցնեն իրենց վստահությունը, որ մեծ հատուցում ունի: Հետո հեղինակը հիշեցնում է այն մասին, որ Տիրոջ գալուստը մոտ է, և հորդորում նրանց, որ հարատևեն իրենց հավատի մեջ, ինչպես որ Հին Կտակարանի շատ սրբեր արեցին, ինչի մասին խոսելու ենք հաջորդ գլխում:

4. Հավատի հաղթանակը (11.1-40)

Հեղինակը մեզ ներկայացնում է Հին Կտակարանի բազմաթիվ տղամարդկանց ու կանանց, ովքեր դժվար և անբարենպաստ հանգամանքներում ուժեղ (հարատևող) հավատ են ցուցադրել: Դա կենդանի հավատ էր, որը երևում էր գործերով:

1-ին համարում գտնում ենք հավատի հստակ սահմանումը. «Արդ հավատը հուսացած բաների հաստատումն է և չերևացող բաների

ապացույցը» (Եբր. 11.1): Այլ կերպ ասած, նրանք, ովքեր ունեցել են նման հավատ, վստահ էին, որ իրենց հույսը կյանքի էր կոչվելու, և համոզված էին, որ կա մի անտեսանելի իրականություն, չնայած որ իրենց ֆիզիկական աչքերով չէին տեսնում այն:

Հավատով ենք հասկանում, որ տիեզերքը Աստծո հրամանով է ստեղծվել, ոչնչից է ստեղծվել. նյութական ոչ մի բան չկար, երբ Աստված ստեղծեց ամեն բան: Աստված էր ամենից առաջ և Նա է ամեն բանի պատճառը (համեմատե՛լ Ծննդ. 1.1):

Առանց հավատի անհնար է Աստծուն հաճեցնել, քանի որ Աստծուն մոտեցողը նախ պետք է հավատա, թե Աստված կա և վարձահատույց է լինում Իրեն փնտրողներին (Եբր. 11.6): Երեք տղամարդ ներկայացվում են որպես հավատարիմներ, ովքեր ապրել են մինչև ջրհեղեղը: Աբելը, Ենովքը և Նոյը: Աբելը Աստծուն մոտեցավ Աստծո ուզած ձևով, Ենովքը Աստծո հետ մտերիմ էր և մարդկանց քարոզում էր այն պատգամը, որը ստացել էր Աստծուց, Նոյը հնազանդվեց Աստծուն՝ կառուցելով տապանը և մարդկանց քարոզելով գալիք դատաստանի մասին: Նրանք Աստծուն հաճեցրին իրենց կենդանի հավատի շնորհիվ:

Հաջորդ հերոսը հավատի հայր Աբրահամն է: Նա ապրում էր բարգավաճ, բայց կռապաշտ քաղաքում: Երբ փառքի Աստվածը նրան հայտնվեց, նա հնազանդվեց և դուրս եկավ քաղաքից՝ նույնիսկ չիմանալով, թե ուր է գնում: Նա (նրանից հետո էլ Իսահակն ու Հակոբը) ապրում էր վրաններում, քանի որ ուխտավոր և օտարական էր, ով «սպասում էր այն քաղաքին, որ հիմքեր ունի, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է» (Եբր. 11.10, Հայտն. 21.2):

6-րդ դասից սովորեցինք, թե ինչպես Աբրահամն ու Սառան մեծ տարիքում հավատով արու զավակ ունեցան՝ Իսահակին: Նույն հավատով մի քանի տարի անց Աբրահամը հնազանդվեց Աստծուն և պատրաստ էր Իսահակին զոհելու՝ մտածելով, որ Աստված կարող էր նրան հարուցանել: Իհարկե մենք գիտենք, որ դրա անհրաժեշտությունը չեղավ (Եբր. 11.19): Դրանից հետո մեզ հիշեցվում է Իսահակի, Հակոբի և Հովսեփի հավատը, ովքեր իրենց նախահայր Աբրահամի նման վստահեցին Աստծուն:

Ինչո՞ւ ծոմ պահել

1. Հոգին, մարմինը և միտքը մաքրելու
2. Աստվածային առաջնորդություն հայցելու
3. Աստծո երեսը խնդրելու և Իրեն մոտենալու
4. Աստծուն ավելի լավ լսելու և Իր կամքը հասկանալու
5. Աստծուց զորություն խնդրելու, որ քո միջոցով խոսի
6. Հոգևոր զորության և իշխանության դիրք հաստատելու
7. Գերություններից ազատվելու
8. Մտքի պայծառություն ունենալու
9. Ապականող խորհուրդներից մաքրվելու
10. Հուսալքման կապանքներից ազատվելու
11. Սատանայի ազդեցությունը տկարացնելու
12. Փոթորիկների մեջ անխախտ մնալու
13. Հոգով և մարմնով զորանալու
14. Մարմնի ցանկություններից ձերբազատվելու
15. Աստվածատուր պարգևներն արծարծելու
16. Ծանր բեռներից ազատվելու
17. Մաքուր սիրտ ու շիտակ հոգի ունենալու
18. Ժխտական խորհուրդներից մաքրվելու
19. Բժշկվելու
20. Զորություն ստանալու համար, որ կարողանամ անել այն, ինչ չեմ կարող անել առանց Աստծո օգնության:

«Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ» (Փիլիպ. 4.13):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

Սխալ դատողություն

Ի տարեց մարդ իր քսանհինգամյա որդու հետ ճամփորդում էր շոգեկառքով: Մինչ ճանապարհ էին դուրս գալիս, բոլոր ճամփորդները զբաղեցրին իրենց տեղերը, իսկ այս երիտասարդն արտասովոր ուրախությամբ ու հետաքրքրությամբ սկսեց դիտել չորս կողմը: Նա իր ձեռքը պատուհանից դուրս հանեց և սուրացող օդը զգալով՝ բարձրաձայն ասաց.

- Հայրի՛կ, նայի՛ր, բոլոր ծառերը ետ են վազում:

Տարեց մարդը ժպտաց և գնահատեց զավակի զգացումները:

Երիտասարդ տղայի մոտ նստած էր մի զույգ, որը լսում էր այս խոսակցությունը: Նրանք մի քիչ տարօրինակ համարեցին 25 տարեկան տղայի մանկական վարմունքը: Հանկարծ տղան բղավեց.

- Հայրի՛կ, տե՛ս, լճակն ու կենդանիները: Ամպերի՛ն նայիր, որ քայլում են շոգեկառքի հետ:

Սկսեց անձրևել և մի քանի կաթիլ տղայի թևին ընկավ: Նա հրճվանքով փակեց աչքերը և դարձյալ կանչեց.

- Հայրի՛կ, անձրև է գալիս. ահա տեսնում եմ ջուրը ձեռքիս վրա:

Կողքը նստած զույգը չկարողացավ այլևս համբերել և հարցրեց ծերունուն.

- Ինչո՞ւ ձեր տղային չեք տանում բժիշկի, որ առողջանա:

Հայրիկն ասաց.

- Հիվանդանոցից ենք գալիս. տղաս կույր էր և այսօր առաջին անգամ տեսնում է չորս կողմը:

Վստահաբար այդ զույգը ամոթահար մնաց, քանի որ սխալ դատողությամբ քննադատել էր այս երիտասարդին, որ կույր էր և հիմա տեսնում էր: Արդյոք մենք նույնպես նման սխալներ չե՞նք անում:

Քաղված

Հոգևոր տնտեսագիտության դասեր մանուկների և պատանիների հետ աշխատողների համար (3)

Դաս 4

«Եվ Նա լեռը բարձրացավ ու Իր մոտ կանչեց նրանց, որոնց Ինքը կամեցավ. և նրանք գնացին Նրա մոտ: Եվ տասներկուսին նշանակեց, որ Իր հետ լինեն, և որ նրանց քարոզելու ուղարկի» (Մարկոս 3:13-14):

Պետք է մեր ժամանակը, մեր աշխատանքը, մեր գումարն ու առաջին հերթին մեզ ներդնենք ՄԱՐԴԿԱՆՑ մեջ:

Տեր Հիսուսն այդպես էր անում Իր երկրային ծառայության երեք տարիների ընթացքում: Նա հստակ ու որոշակի ծրագիր ու ռազմավարություն ուներ Իր ծառայության համար: Նա որոշել էր Իրեն, Իր ժամանակը, Իր աշխատանքը, Իր սերը ներդնել մարդկանց փոքր խմբի մեջ, որոնց ընտրել էր անձամբ Իր ծառայության հենց սկզբում:

Հաջորդող երեք տարիների ընթացքում նրանց մեջ տեսավ Իր ներդրումը՝ որպես Իր ծառայության հիմնասյուն Նա շատ հրաշքներ գործեց, օգնեց ու բժշկեց շատ ուրիշների, բայց նախ և առաջ նվիրվեց տասներկուսից բաղկացած այդ փոքր խմբին, որովհետև գիտեր, որ նրանք էին ապագան, ու նրանց էր օգտագործելու Աստված՝ աշխարհով մեկ Ավետարանը տարածելու համար:

Այդ մարդկանց մեջ Նրա ներդրումը մի շարք մասերից է բաղկացած:

Ուսուցում

Նրանց ժամերով սովորեցնում էր Աստծո մասին, Իր մասին, Սուրբ Հոգու մասին ու հենց իրենց մասին, թե ինչ պետք է լինեն ու ինչ անեն: Բազմաթիվ առիթներով տասներկուսին առանձին էր սովորեց-

նում: Ուրիշ դեպքերում էլ նրանք միանում ու լսում էին Նրան հանրության մեջ ծառայելիս:

Ցուցադրում

Նա ոչ միայն աշակերտներին ասում էր, թե ինչ անեն, այլև ցույց տալիս, թե ինչպես անեն: Նրա ծառայությունն օրինակ էր հանդիսանում բազում ձևերով՝ մարդկանց օգնելու, նրանց օգնելու ու սիրելու կերպերով:

Պատվիրակություն

Նա նախ աշակերտներին ուղարկում էր քարոզելու և ծառայելու կարիքավորներին, ապա նրանցից ծառայության վերաբերյալ հաշվետվություն էր ակնկալում:

Օրինակ

Ամենից առաջ նրանց համար ապրելու և հանգամանքներին ու դիմակայությանը հակազդելու օրինակ էր ծառայում: Նրա կյանքն աշակերտների համար մտորման (Հովհ. 13:14-15), հալածանքի ու տառապանքի մեջ հանգստության ու խաղաղության (Ա Պետ. 2:21-23), հեզության (Մատթ. 11:29), մեղմության (Բ Կորնթ. 10:1), ինքնազոհողության (Փիլիպ. 2:5-8) և ներողամտության (Կող. 3:13) օրինակ էր:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Üß ³ Ý ³ í áñ Ù ³ ñ ¹ ÇÏ ² ë ï Íá Ù ³ ëÇÝ

«Ուշադրություն դարձրեք ձեր ապրելակերպին, որովհետեւ դուք կարող եք լինել այն միակ Աստվածաշունչը, որ մարդիկ երբևէ կարդում են»:

Ու Ջ Թոմս, արդի գործիչ և քարոզիչ

«Ես միշտ ասել եմ, ես միշտ ասում եմ, որ սուրբ Գրքի շարունակական ընթերցումը կկերտի լավագույն քաղաքացի, լավագույն հայր և լավագույն ամուսին»:

Թոմաս Ջեֆերսոն (1734-1826), ԱՄՆ երրորդ նախագահ

Մարիամը այցելում է Եղիսաբեթին

Ղուկաս 1.39-56

Եղիսաբեթ

Մարիամը որոշեց այցելել իր բարեկամուհի Եղիսաբեթին. դա մի այցելություն էր լինելու, որն ամուր հաստատելու էր նրա հավատը: Եղիսաբեթի հավատն ուժեղ էր, և նա սկսել էր գովաբանել Աստծուն այն բանի համար, ինչ Նա արել էր իրեն՝ արու զավակ պարգևելով, իր նախատինքը վերցնելով մարդկանց միջից: Նա ուրախությամբ ողջունեց Մարիամին՝ ճանաչելով նրա արտոնյալ դիրքը՝ որպես իր Տիրոջ մայր: Նա օրհնեց Մարիամին՝ որպես մեկին, ով հավատացել էր իրեն ուղղված Տիրոջ ուղերձին:

Երեխան շարժվեց Եղիսաբեթի որովայնում, երբ Մարիամը ողջունեց նրան: Սա կարող էր լինել Եղիսաբեթի կողմից չգիտակցված զգացմունքային արձագանք, ինչի մասին չգիտենք: Մենք հասկանում ենք Եղիսաբեթի հուզմունքը, քանի որ տեսնում ենք, որ նա խոսում էր բարձրաձայն, հնարավոր է՝ նույնիսկ բղավում էր: Նա օրհնեց Մարիամին՝ որպես երանելի մեկին, ով հավատաց, որ Տիրոջ կողմից նրան ասվածները կատարվելու էին:

Եղիսաբեթը լցված էր Սուրբ Հոգով, ինչը նրան հնարավորություն տվեց՝ պատմելու այն պատգամի մասին, որը Աստված էր հայտնել: Քանի որ այդ այցելությունը տեղի ունեցավ Մարիամին հրեշտակի այցելությունից անմիջապես հետո, Եղիսաբեթը չէր կարող Մարիամի մասին եղած նորությունը իմանալ որևէ մարդկային աղբյուրից: Սուրբ Հոգին հայտնեց, թե ինչ էր եղել Մարիամի հետ, և այնուհետև Եղիսաբեթը բացականչեց, որ երկուսն էլ՝ և՛ Մարիամը, և՛ իր որովայնում եղած պտուղն օրհնված են: Նա հասկացավ, թե ով է գրտնվում Մարիամի որովայնում՝ Մարիամի՝ որպես իր Տիրոջ մոր հետ խոսելով: Նա զարմանում էր, թե ինչով էր արժանացել այդ այցելությանը:

Եղիսաբեթը օրհնեց Մարիամին իր հավատի համար: Ի տարբե-

րություն Զաքարիայի՝ Մարիամը հավատացել էր հրեշտակի ուղերձին: Եղիսաբեթն ավելացրեց, որ խոստումն իրականանալու է: Դրանով Եղիսաբեթը ցույց տվեց Աստծո և Նրա հնարավորությունների նկատմամբ հավատը՝ հասնելու նրան, ինչը, որպես կանոն, անհնար է թվում: Այդ իսկ պատճառով նա մեզ համար հանդիսանում է հավատով լցված կյանքի օրինակ:

Մարիամի երգը

Մարիամի պատասխանը Եղիսաբեթին Աստծուն փառաբանելն էր: Նրա գովքը ցույց տվեց իր հավատը և վստահությունը առ Աստված: Իր փառաբանությամբ նա ցնծում էր իր Աստծով՝ իր Փրկչով: Իր փառաբանությամբ նա ցույց տվեց իր գիտելիքները Իսրայելի պատմության և իր ժողովրդի նկատմամբ Աստծո բարության մասին: Հին Կտակարանի թեմաները երևում էին նրա երգի մեջ: Մարիամը ցընծում էր Աստծով՝ իր Փրկչով, քանի որ հիշում էր Իր խոնարհ ծառային: Սաղմոս 138:6-ն ասում է. «Թեև Տերը բարձր է, բայց տեսնում է խոնարհին, իսկ հպարտին հեռվից է ճանաչում»:

Նա գիտակցում էր, որ ապագայում հիշվելու է, որպես օրհնված կին: Նա գիտակցեց, որ Ամենակարողը հիանալի բան էր արել իր համար: Իրականում, չնայած հրեշտակները հզոր են, նրանք պարզապես կատարում են Տիրոջ Խոսքը՝ հնազանդվելով Նրա ձայնին (Սաղմոս 103:20): Ոչ ոք չի կարող պատմել Տիրոջ զորությունը կամ իմանալ Նրա ամբողջ փառքը (Սաղմոս 106: 2): Մարիամը գիտակցեց Տիրոջ անվան սրբությունը. դա նույնպես Հին Կտակարանի հասկացություններից մեկն է. «Սուրբ ու պատվելի է Նրա անունը» (Սաղմոս 111:9):

Դա Աստծո մեծ գործերի և բարության հիշեցումն էր, գործեր, որոնք արված էին Իր բազուկներով: Աստծո բազուկները միշտ խոսում են Նրա ուժի մասին: Նա ցրեց ամբարտավաններին: Ասորիները, ովքեր հարձակվել էին Երուսաղեմի վրա Եզեկիայի թագավորության ժամանակ, կոտորվեցին, երբ Աստված միջամտեց Իր ժողովրդին պաշտպանելու համար: Նա հանեց ղեկավարներին իրենց աթոռներից: Նաբուգոդոնոսորը և նրա հետնորդ Բաղդասարը Իսրայելի Աստծո կողմից խոնարհեցվել էին: Նա բարձրացրեց հնազանդին. Դավիթը

բարձրացվել էր ոչխարների հովվից թագավորի պաշտոնի, իսկ գերեվարված Դանիելը՝ գերու կարգավիճակից թագավորից հետո երկրորդ մարդու: Աստված նաև կերակրում է սովածներին լավ կերակուրով: Հիշում ենք Հովսեփի եղբայրներին, ովքեր Եգիպտոսում հացահատիկ էին գնում իրենց իսկ եղբորից: Սաղմոս 107:9-ը հիշեցնում է մեզ, որ Աստված հագեցնում է կարոտյալ անձին ու անոթի հոգին բարությամբ է լցնում: Նա հարուստներին ձեռնունայն է ճանապարհում: Երբ Մարիամն ասում էր, որ Աստված, Իր ողորմությունը հիշելով, օգնեց Իսրայելին՝ Իր ծառային՝ հիշելով Աբրահամին ու նրա շավղին, միգուցե նկատի ուներ Սաղմոս 98:3-ը, որն ասում է. «Հիշեց Իր ողորմությունը ու ճշմարտությունը Իսրայելի տան հանդեպ. երկրի բոլոր ծայրերը տեսան մեր Աստծո փրկությունը»: Աստված միշտ գործում է Իր խոստումներին համապատասխան:

Իր երգում Մարիամը նայում է Աստծո մարգարեական խոստումների կատարմանը: Մենք տեսնում ենք և՛ նրա ուրախությունը, և՛ նրա հնազանդությունը, ինչպես նաև Աստծո ուժի և ողորմության գիտակցումը: Այստեղ տեսնում ենք նաև Աստծո հավատարմությունը Աբրահամին: Ակնհայտ է՝ Մարիամը հավատում էր, որ Հին Կտակարանում գրված Երուսաղեմին վերաբերող մարգարեությունները, որոնք արված էին Աստծո կողմից մարգարեների միջոցով, պետք է կատարվեին: Աստված չէր թողել Իր ժողովրդին և շարունակում էր պաշտպանել նրանց:

Մեզ համար այսօր

Մարիամը ցույց տվեց Աստծո նկատմամբ խորը ակնածանք և Աստծո Խոսքի խորը իմացություն: Դրանում նա մեզ համար օրինակ է հանդիսանում: Ինչպե՞ս ենք մոտենում Աստծուն: Արդյո՞ք նախ հիանում ենք Նրա անձի և գործի մեծությամբ: Արդյո՞ք Մարիամի նման ծանոթ ենք Աստծո կատարած բոլոր գործերին, որոնք գրված են Աստվածաշնչում: Եվ հետևաբար արդյո՞ք փառաբանությամբ և ակնածանքով գալիս ենք Նրա մոտ՝ ճանաչելով Նրա բարությունը մեր հանդեպ, թե՞ գալիս ենք խնդրանքների երկար ցուցակով: Եթե այդպես է, ապա Մարիամի օրինակից պետք է սովորենք Աստծուն փառաբանել Իր ով լինելու և Իր կատարած գործերի համար:

Ճշմարիտ ապաշխարություն
Հովել 2.12-32

«Արդեն շատ ուշ է, որ ներողություն խնդրես քո մեղքերի համար, դու պետք է նախապես մտածեիր արարքներիդ հետևանքների մասին, ես ինչպե՞ս կարող եմ ներել քո արարքները»,- այս խոսքերը կարող է ասել հայրը որդուն, կինը՝ ամուսնուն կամ ամուսինը՝ կոնջը:

Երբևէ որևէ մեկը քեզ ասե՞լ է, որ ներում խնդրելու համար շատ ուշ է: Սոսկալի բան է, երբ որևէ մեկին ասում ես, թե նա երբեք չի ներվի: Նույնիսկ անհավատարիմ Հուդային Աստված չասաց. «Արդեն ուշ է» կամ «Տեսնենք, թե ինչ կլինի»: Ճիշտ է՝ Հուդան կործանվեց սոսկալի ժանտախտի ու երաշտի պատճառով, սակայն Աստված Հովել մարգարեի միջոցով ասաց. ««Ուստի, նույնիսկ հիմա,- ասում է Տերը,- Ինձ դարձեք ձեր ամբողջ սրտով, ծոմապահությամբ, լացով ու սգով»: Ձեր սրտերը պատռեցեք, ո՛չ թե ձեր հանդերձները, և ձեր Տեր Աստծուն դարձեք, քանի որ ողորմած է ու գթառատ, երկայնամիտ ու բազմողորմ և չարիքի համար զղջացող» (Հովել 2.12-13):

Այնուհետև բոլորին ընդհանուր հրավերք է ուղղվում.

«Ով որ կանչի Տիրոջ անունը՝ կփրկվի» (Հովել 2.32):

«Ով որ կանչի Տիրոջ անունը». սա չի նշանակում մի քանի անգամ Տիրոջը կանչել, ուղղակի քրիստոնյա դառնալ կամ նույնիսկ հավատարմորեն հոգևոր ծառայությունների ու միջոցառումների մասնակից լինել: Դատարկ խոսքերն ու խոստումները տպավորություն չեն թողնում Աստծո վրա:

Աստված Հովելի միջոցով խոսեց ու ասաց. «Ձեր սրտերը պատռեցեք, ո՛չ թե ձեր հանդերձները»: Չարլզ Սպերջենն իր քարոզներից մեկում ասում է.

«Հանդերձները պատռելը և կրոնական հույզերի այլ արտաքին նշանները հեշտությամբ են դրսևորվում, բայց հաճախ՝ կեղծությամբ: Ճշմարիտ ապաշխարություն զգալն ավելի դժվար է ու հազվադեպ:

Մարդիկ սիրում են մասնակցել մարդաշատ ու տարածում գտած կրոնական արարողություններին, որովհետև դա հաճելի է մարմնի համար, բայց իսկական կրոնը չափազանց խոնարհեցնող է, սիրտը քննող, մարմնավոր մարդու նախասիրություններից վեր: Մարմնավոր մարդիկ գերադասում են ցուցադրականը, աշխարհիկն ու խարխուլը: Արտաքին երևույթները ժամանակավորապես հարմարավետ են, աչքին ու ականջին հաճելի, ամբարտավան ու մարդուն մեծամտացնող, բայց ի վերջո՝ դրանք մոլորության են տանում, քանզի մահվան ժամանակ և դատաստանի օրը հոգին ավելի ամուր հիմք է պահանջում, քան զուտ արարողություններն ու ծիսակարգերն են: Իսկական բարեպաշտությունից զերծ կրոնը, որը հրամցվում է առանց անկեղծ սրտի, սին է, ունայն: Երկրպագության բոլոր ձևականությունները երկրնքի վեհասքանչության մեջ կեղծիք են ու հանդուգն ծաղրանք»:

Հանդերձները պատռելը կամ այլ արտաքին նշաններն ու դրսևորումները, թերևս մարդուն հոգեկան բավականություն պատճառեն, թեթևացնեն խիղճը, տպավորություն թողնեն ուրիշների վրա, բայց ոչ Աստծո: Աստված ոչ թե մակերեսային ու ոչ սրտաբուխ դրսևորումներ է ուզում, այլ միմիայն սրտանց նվիրում: Եթե ապաշխարությունը սրտանց չէ, ուրեմն այն իսկական չէ: Իսկ եթե չկա իսկական ապաշխարություն, ուրեմն չի կարող լինել ներում և արդարացում: Աստծուն կրոնի դրսևորումներից առավել մարդու կոտրած ու խոնարհ սիրտն է գոհացնում:

Երբ Դավիթը հանդիմանվեց իր մեղքի համար, նա աղերսեց Աստծուն՝ ասելով.

«Ողորմի՛ ինձ, ո՛վ Աստված՝ Քո գթասիրության համեմատ, Քո առատ գորովագթությամբ ջնջի՛ր իմ հանցանքները: Իմ անօրենությունից ինձ ամբողջովին լվա՛ ու իմ մեղքից ինձ սրբի՛ր: Քանի որ ես ընդունում եմ իմ հանցանքները ու իմ մեղքը միշտ իմ առջև է: Քո, միմիայն Քո դեմ մեղանչեցի և Քո աչքերի առջև այս չարիքը գործեցի, որպեսզի Դու իրավացի լինես խոսելիս և հստակ՝ դատելիս: Փրկի՛ր ինձ արյան մեղքից, ո՛վ Աստված, իմ փրկության Աստված, ու իմ լեզուն բարձրաձայն երգելու է Քո արդարության մասին: Քանի որ Դու զոհ չես ցանկանում, որ այն մատուցեմ: Դու ողջակեզից հաճույք

չես ստանում: Աստծո զոհը կոտրված հոգին է. կոտրված ու խոնարհ սիրտը, ո՛վ Աստված, Դու չես արհամարհի» (Սաղմոս 51.1-4, 14, 16-17):

Հուդային ուղղված ապաշխարության կոչն այսօր ուղղված է բոլորիս: Նույնիսկ հենց այս պահին էլ է Տերը մարդկանց ապաշխարության կանչում: Նրան դառնալը երբեք ուշ չէ, բայց դա պետք է ավելին լինի, քան արտաքին ծեսն է:

Աստված ուզում է, որ Հուդայի ժողովուրդը սրտանց, ծոմապահությամբ, լացով ու ողբով Իրեն դառնա: Ինչո՞ւ պետք է Աստված քիչ ակընկալի մեզանից, մի՞թե մենք բոլորս էլ մեղավոր չենք և փրկության կարիք չունենք:

Մեր սրտերը քարի պես կարծր են, բայց մեր մեղքերի համար խաչված Հիսուսը պատրաստ է մեր ապականված սրտերի փոխարեն նոր սիրտ տալու.

«Եվ ձեզ նոր սիրտ եմ տալու ու ձեր ներսում նոր հոգի եմ դնելու և ձեր մարմիններից հանելու եմ քարեղեն սիրտն ու ձեզ մարմնեղեն սիրտ եմ տալու: Իմ հոգին դնելու եմ ձեր մեջ, ու դուք Իմ օրենքներով եք շարժվելու ու Իմ վճիռներն եք պահելու ու գործադրելու» (Եզեկ. 36.26-27):

Թող Աստված օգնի մեզ, որ լսենք մեզ մեղքի համար հանդիմանող Սուրբ Հոգու ձայնը, որպեսզի խոնարհվենք ու աղոթենք, Աստծո երեսը փնտրենք և մեր չար ճամփաներից հեռանանք: Եկեք պատռենք մեր սրտերը, ոչ թե հանդերձները, միայն այդ ժամանակ Աստված կների մեզ և նոր սիրտ ու հավիտենական կյանք կտա:

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

Բարի լուր

«Ինչպես սառը ջուրն է ծարաված մարդու համար, այնպես է հեռու երկրից եկած բարի լուրը» (Առակ. 25.25)

Մարդիկ միշտ լուրի են սպասում, ուզում են լուրեր լսել, նույնիսկ եթե վատ լուրեր են: Մենք ուզում ենք լավ և ուրախալի լուրեր լսել ու դրանք ուրիշներին էլ հաղորդել:

Երբ գերության մեջ գտնվող կամ բանտարկված մարդը, հատկապես նա, ով դատապարտված է մահվան, լուր է ստանում ազատ արձակման մասին, որքա՜ն մեծ ուրախություն է ունենում:

Ավելի մեծ, ուրախալի ու բարի լուր է Ավետարանի լուրը: Մարդը մահվան է դատապարտված, որովհետև խախտել է արդար Աստծո օրենքը: Աստվածաշունչն ասում է. «մարդկանց համար սահմանված է մեկ անգամ մեռնել և որից հետո՝ դատաստան»: Դու կարող ես ասել. «Ես ազատ եմ լինելու Աստծո դատաստանից. մեղք չունեմ»: Յուրաքանչյուր մարդ մեղավոր է, Աստվածաշունչն ասում է թե յուրաքանչյուր մարդ դատապարտության տակ է: Բայց սա է բարի լուրը մարդկության համար՝ Տեր Հիսուսը մեր դատապարտությունը ու մեր մեղքերի պատիժն Իր վրա վերցրեց ու մեզ համար պատժվեց: Եթե ընդունես Նրան՝ որպես քո փոխանորդի, ով քեզ համար Աստծո պատիժը վերցրեց, այն ժամանակ հավիտյան ազատ կլինես Աստծո դատապարտությունից: Լսի՛ր, թե ինչ է ասում Աստծո Խոսքը. «Հիմա դատապարտություն չկա նրանց համար, ովքեր Հիսուս Քրիստոսի մեջ են, ովքեր մարմնապես չեն քայլում, այլ՝ ըստ Հոգու» (Հռոմ. 8:1): Տեր Հիսուսն ասել է. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ով լսում է Իմ խոսքը և հավատում Նրան, որ Ինձ ուղարկեց, հավիտենական կյանք ունի և դատապարտության պիտի չգա, այլ՝ մահից կյանքի է անցել» (Հովհ. 5.24):

Երբ հացի կարոտ մի աղքատի բարի լուր գա, թե մեծ ժառանգություն ունի ստանալու, կամ թագավորը պալատի պես տուն ու հարստություն է տալու նրան, ի՜նչ մեծ ուրախություն կունենա: Ավելի մեծ ուրախություն է Ավետարանի Բարի լուրը մեղավորին: Աստծո

Խոսքն ասում է, որ մարդը մեղավոր է ու աղքատ: Աստված նրան ձրի փրկություն, մեղքերի թողություն, երկնային բնակարաններ, հավիտենական ժառանգություն է շնորհում: Աստծո Խոսքն ասում է. «Բայց որոնք ընդունեցին Իրեն, նրանց Նա Աստծո որդիներ դառնալու զորություն տվեց, նրանց, որ կհավատան Իր անվանը» (Հովհ. 1.12): Բայց ով չընդունի Տեր Հիսուսին՝ որպես իր անձնական Փրկչի, դարձի չգա ու չխոստովանի իր մեղքերը Աստծուն, որքան էլ հարուստ լինի այս կյանքում, դժոխքի բոցերի ու տանջանքի մեջ մի կաթիլ ջուր է պաղատելու այն հարուստի պես ու չի ստանալու:

Անբուժելի հիվանդությամբ տառապող հուսահատ հիվանդի համար ուրախություն է հիվանդությունից լիովին ազատվելու լուրը, սակայն մեղքի հիվանդությամբ տառապող մեղավորի համար ավելի մեծ ուրախություն է Ավետարանի Բարի լուրը: Մեղավորը մեղքի հիվանդությամբ է վարակված: Աշխարհի բժիշկները, դեղերը ու միջոցները չեն կարող ազատել նրան այդ հիվանդությունից: Բայց լսի՛ր Ավետարանի Բարի լուրը. Քրիստոսը բարի բժիշկն է: Միայն Նա կարող է փրկել քեզ մեղքի աղտից ու հիվանդությունից:

Մարդու հոգին ծարավ է, աշխարհի հաճույքները չեն կարող հագեցնել մարդու հոգին: Տեր Հիսուսը սամարացի կնոջն ասաց. «Ով այս ջրից խմի, նորից կծարավի, բայց ով խմի այն ջրից, որ Ես նրան պիտի տամ, երբե՛ք չպիտի ծարավի: Այլ այն ջուրը, որ Ե՛ս եմ տալու նրան, նրա մեջ ջրի աղբյուր կլինի՝ հավիտենական կյանքի համար բխող» (Հովհ. 4.13-14): Եթե չխմես Կենաց ջրից այս կյանքում, դժոխքում աղաղակելու ես մի կաթիլ ջրի համար, ու չի տրվելու քեզ:

Խմի՛ր Կենաց ջրից, քանի որ հարմար առիթ ունես հիմա:

Խ. Գասպարյան